№ 27 ԹԷՀՐԱՆ ՇԱԲԱԹ 23 ՅՈՒԼԻՍԻ 1894 № 27

ԱԹԱՋԻՆ ՏԱՐԻ

ՇԱՒԻՂ

ԱԹԱՋԻՆ ՏԱՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ՔՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՀԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

„ՇԱՒԻՂԸ“ ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» Տարեկան գինը 10 ղրան, կէս տարուանը 6 ղրան: Առանձին համարները 5 շահի. Արտասահմանում տարեկան 8 ֆրանկ կամ 3 ռուբլի կէս տարուանը 5 ֆր. կամ 2 ռուբլի: Թէհրանում գրւում են միմիայն, խմբագրատան մէջ: Մեր հասցէն. Téhéran Rédaction CHAVIGH.

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է առաւօտեան, 8—4 ժամը: Կիւրակէ եւ տօն օրերը 10—2 ժամը: Յայտարարութիւն ընդունւում է ամեն լեզուով: Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 1 շահի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գիտակցական բարեգործութիւնը.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Քահանայական հարցը մեղանում. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—Բանասիրական Փայտակարան կամ Ղարաղաղ գաւառը.—Յայտարարութիւններ:

ԳԻՏԱԿՑԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

—

Վաղը Վարդավառ է, հայոց հին սիրելի տօներից մէկը, որ վառել է ժողովրդի ջերմեռանդութիւնը ոչ միայն մեր՝ քրիստոնէութիւնը ընդունելուց յետոյ, այլ և նորանից առաջ երբ այնքան օրով և ոգեւորութիւնով տօնւում էր Աստղիկան նուիրուած այդ տօնը որ վերջը ձեւափոխուեցաւ մի քրիստոնէական տօնի, չը կորցնելով, այնու ամենայնիւ, իւր մի քանի գծերը:

Առիթը ներշնչում է մեզ մի քանի խորհրդածութիւններ այն ձեւի վերայ որով Թէհրանցի հայերը տօնում են Վարդավառը: Քաղաքացիներից մի մեծ բազմութիւն՝ այդ օրը հաւաքւում է քաղաքից ոչ շատ հեռու գտնուող Վանաք գիւղը, թէ զուարճանալու համար, գիւղի զով աղբիւրի ափերին՝ գըլխիկոր ուռիների ստուերի տակ ջուր սըրսկելով միմիանց վերայ, և թէ, գլխաւորապէս մատաղներ անելու համար: 30—40 գուցէ և աւելի ոչխարներ մորթւում են այդ օր, և տնից տուն մաս առ մաս բաժանւում գիւղացիներին կամ ամարանոց եկած քաղաքացիներին, և ամեն մէկ տուն ուտանում է երկու երեք բաժին մատաղ: Այդ կերպով կատարւում է մատաղների մի փոխանակութիւն, ինչպէս օրինակ այլ տօների ժամանակ կատարւում է այցետոմսերի մի փոխանակութիւն:

Մենք ոչինչ չէինք ունենալ ասելու մատաղի սովորութեան դէմ, եթէ դա իսկապէս շեղած չը լիներ իւր բուն, նախնական նշանակութիւնից: Ինքն ըստ ինքեան յայտնի է որ քրիստոնէութիւնը ողջակէզ կամ զոհ չէ ընդունում. և եթէ մատաղը թոյլատրուած, այդ այն մտքով է որ ունևոր դասակարգը գորանով մի օգնութիւն անէ աղքատներին, որպէս զի հասարակաց ուրախութեան մի օր, նոքա անմասն չը գըտնուէին ընդհանուր կեր ու խումից: Բայց այն հանգամանքներում ինչ այժըմ կատարւում է մատաղը, ոչ թէ մի օգնութիւն չէ կարօտեալներին—և, փառք Աստուծոյ, այդ աստիճան կարօտեալներէլ չը կան Վանաքում,—այլ, ինչպէս ասացի նք, մի փոխանակութիւն է ունևոր դասակարգի ընտանիքների մէջ, որով և բոլորովին շեղուած է լինում բարեգործութեան նպատակից, որ մատաղ անելու միակ նպատակն է:

Եթէ հասարակութիւնը կամենում է մի բարեգործութիւն անել, և այդ Վանաքի մէջ. մենք կարծում ենք որ կայ դորանից աւելի արդիւնաւէտ ձևը: Ամեն մարդ գիտէ որ ջանքեր են լինում Վանաքի մէջ մի կանոնաւոր փոքրիկ ուսումնարան բանալու. կամ աւելի ճիշտ է ասել, նախկին վարժարանը, որ միջոցների պակասութիւնից փակուել էր, վերսկսելու. ահա բարեգործութեան մի գեղեցիկ ասպարէզ: Այդ գումարով որ ամեն տարի շռայլւում է մատաղների համար, մենք վստահ ենք, կարելի է հայթայթել դպրոցի տարեկան ծախքը:

Այժմ հարցնում ենք, որն է աւելի մեծ բարեգործութիւն. միջոցներից զուրկ, գիտութիւնից զուրկ երեխաների կրթութիւն մատակարարել, թէ մատաղների մի փոխանակութիւն անել:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՓԱՅՏԱԿԱՐԱՆ ԿԱՄ ՂԱՐԱԴԱՂ.

Ա.

Պ. Խմբագիր

Ձեր „Շաւիղ“ շաբաթաթերթի նպատակը լինելով քննել Պարսկաստանի հայ գիւղացիների կեանքն ու կենցաղավարութիւնը եւ առաւելապէս կրթական գործի մէջ նոցա ունեցած յառաջադիմութիւնը, այս նպատակով ես եւս ցանկացայ հիւրնկալուիլ ձեր թերթի մէջ, տալով նորան Հայաստանի հին նահանգներից մէկի մոռացուած եւ ամեն բանից յետ մնացած ժողովրդի կեանքի մասին տեղեկութիւններ: Ցուսով եմ որ կընդունէք եւ տեղ կը տաք ձեր թերթի մէջ:

—

Այս նահանգը Հին Փայտակարանն է, որ այժմ կազմում է Ատրպատականի մի գաւառը Ղարադաղ (Սեւ լեռ) անուամբ:

Ղարադաղն Ատրպատականի մի գաւառը լինելով, կառավարւում է նոյն տեղի գաւառապետի ձեռքով, որ նստում է Ահար քաղաքում:

Ղարադաղի հայերը բաժանուած են չորս գաւառակների մէջ, որոնք են 1) Տիզմառ, 2) Մեշափարա, 3) Մինջվան, 4) Քէյվան: Այս չորս գաւառակներն ունին 28 գիւղ, որոնց մասին մի առ մի պէտք է գրեմ:

Գիւղերը ընդհանրապէս ընկած են արեւմուտքից դէպի արեւելք, Երասխ գետի ընթացքով, որից հեռու են 1—3 մղոն. այս հեռաւորութեամբ են ընկած եւ հայ գիւղերը իրարից:

Բ.

ՏԻԶՄԱՌ

Գարնանային օրերից մէկն էր, երբ հասայ Տիզմառ գաւառակի արեւմտեան ծայրում գտնուող Աղաղան անունով հայ գիւղը:

Աղաղանը ընկած է մի լեռան արեւելեան ստորոտում, որի հանդէպ ընկած է մի ուրիշ լեռն. այս երկու լեռների միջի ձորով հոսում է փոքրիկ աղբիւրակը, որ գիւղից քիչ ցած միանալով երկու ուրիշ աղբիւրների հետ եւ մի կարկաչասահ առուակ կազմելով՝ հոսում է դէպի Երասխը, որ գիւղից հեռու է 2 մղոն:

Աղաղանը ունի 40 տուն. մի եկեղեցի կէս քարաշէն եւ կէս փայտաշէն. սա հինուց շինուած էր, վերջը կէսը քանդուելով գիւղացիք նորոգած են. եկեղեցին շատ անշուք է, բոլորովին զուրկ եկեղեցական սպասներից, պատերի վերայ կան հին պատառոտուած պատկերներ. ունի մի քահանայ բաւական խելօք, բայց ուսման կողմից տգէտ: Ղարադաղի քահանաները եկեղեցական արարողութիւնից բացի ուրիշ բան չը գիտեն:

Գիւղացիք պարապւում են երկրագործութեամբ. կենդանիներ այնքան են պահում, որ իրանց կարիքներին բաւականութիւն է տալիս:

Աղաղանը ի հինուց ուսումնարանի երես տեսած չէր, գիւղում բացի քահանայից ուրիշ կարդացող շատ քիչ կը գտնուի, եթէ մէկը մի նամակ կամ մի ուրիշ թուղթ գրելու կամ կարդալու պէտք ունենայ, պէտք է քահանային դիմէ, իսկ վերջինս

Այն բոլոր յարգանքով որ մենք ունինք դէպի հնաւանդ սովորութիւնները, երբ որ նոքա օգտակար են կամ բարոյականացուցիչ ազդեցութիւն ունին, մենք գտնում ենք որ մատաղի սովորութիւնը, այս հանգամանքներում ինչ որ կատարւում է, մի շռայլութիւն է, և ուրախ կը լինէինք այդ կարծեցեալ բարեգործութեան տեղ տեսնել իրական, գիտակցական բարեգործութիւն։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՄՆԱՅԱՆՈՒՄ

—

Ներկայ հայ ժողովրդի համար ամենակենսական հարցերից մէկը քահանայական խնդիրը լինելով՝ արտասահմանի հայ մամուլը շատ զբաղուեց երկար յօդուածներ ու էջեր նուիրելով, որպէս զի նա—ժողովուրդը ունենալով արթուն ու հեռատես հովիւներ, որոնցից կախուած է նորանց տնտեսական, բարոյական, նիւթական և մինչև անգամ ֆիզիքական բարօր, ապահով ու երջանիկ վիճակը, (որովհետև տգէտ ժողովուրդը հեռևում է քահանային այնպէս՝ ինչպէս ոչխարները իրանց հովուին) կարողանայ դիմել դէպի ճշմարիտ լուսաւորութիւն։ Բայց մենք պարսկահայերս կարծես այնքան ենք կշտացել, կրթուած քահանաներով, որ երբէք հարկաւոր չէ մեզ համար այդ խնդրին մինչև անգամ հարևանցի կերպով ուշադրութիւն դարձնել, մի թեթև ակնարկ ձգել այդ էական հարցի վերայ, թէ արդեօք ունէ՞նք բաւական քահանաներ և եղածները յարմար ու իրանց կոչմանը արժանի՞ են թէ ոչ։ Դիժբաղդաբար ոչ, այլ այդ հարցի վերայ նայելիս մեր առաջ բացւում է մի անանցանելի վիհ, մի տխուր երևոյթ։ Այսօր մեր հայ գիւղացութմբուլթեան, նորա տնտեսական ու բարոյական վիճակի հաստատուն հիման վերայ չը կանգնելու ու լուսաւորութեան, կրթութեան գործը կրիայի քայլերով յառաջ գնալու էական կէտը տգէտ քահանաների շատութիւնը ու կրթուած, արժանաւոր քահանաների բացակայութիւնն է պատճառը։ Այցելիր մեր գաւառները ու գիւղերը, հէնց մեր լուսաւորութեան կենդրոն համարուող քաղաքները և դու ինչ կը տեսնես, ամեն տեղ զուրկ մի հատ արժանաւոր քահանայից. մի տեղում նա փորը հատացրած կատարեալ վաշխառուի դեր է կատարում, մի ուրիշ տեղում բահը դրած ուսին ջրում է իւր արտը կամ այգին և փողոցային ամեն տեսակ լուտանքներ, հայհոյանքներ թափում է այն մարդկանց գլխին, որոնք յանդգնում են ձեռք տալ նորա ջրին, և մի այլ տեղում նա միացած աղայի հետ կեղեքում, մաշում է խեղճ գիւղացուն իւր քէֆի համեմատ և վերջապէս ամեն տեղ նա իւր տգիտութեամբ հեշտացնում է իւր միամիտ հօտի դայլերին ղոհ դառնալը։ Մի անգք որ երբէք չեմ մոռանալ դա մի քահանայի, մի կրթուած ուսուցչի, որ մեծ զոհողութեամբ յօժարուել էր մնալ Խ... քաղաքում իբրև ուսուցիչ, իւր պաշտօնից հեռացնելն ու մի տիրացուի նորա տեղ դնելն է։

Գուցէ շատերը առարկեն թէ մենք այդ բոլորը գիտենք, բայց այնքան յետ ենք մենք ռուսահայերից ու տաճկահայերից, որ ոչ կարող ենք քահանաներին նիւթականապէս ապահով վիճակի մէջ դնել և ոչ էլ բանի բուն նշանակութեամբ քահանաներ ունենալ, եթէ մէկը մեզ մօտ յանձն է առնում քահանայական պաշտօնը, այդ էլ մի մեծ բարեբարութիւն ու անձնուրացութիւնէ (???)։ Բայց մենք այդպիսիներին կը պատասխանենք, մենք չենք պահանջում համալսարանական, քահանաներ և ոչ էլ հոգարներով վարձատրութիւն, մենք պահանջում ենք այն՝ ինչոր հարկաւոր ու կարելի է։ Օրինակ՝ Դավրէժը այսօր զուրկ է գրել կարդալ իմացող մի հատ արժանաւոր քահանայից, ինչու, միթէ չի կարող պահել կամ թէ չը կան արժանաւորներ, այո՛ կան տասնեակներով այսօր պատրաստ քահանայ ձեռնադրուելու եթէ նորանց տպարէզ և նիւթական միջոցներ տրուի և այդ դժուար բան չէ՝ վարձատրել քահանային պատուաւոր կերպով իբրև մի ուսուցիչ, որքան հարկաւոր են ուսեալ ուսուցիչներ, որպէս զի մենք ունենանք մարդ ու մարդկութեան օգտակար տնդամներ, նոյնքան հարկաւոր ու ստիպողական է ունենալ կրթուած քահանաներ, որ մենք արթնանանք բարոյական, խոր մեռելային քնից։ Ինչ որ կարող է անել մի քահանայ, չի կարող անել մի թագաւոր։

Այս օրերս առիթ ունեցայ խօսակցելու մի քահանայացուի հետ, որը տպերիս գրելուն պատճառ եղաւ, ձեռքումս ունենալով „Շաւիղ“ շաբաթաթերթից մի քանի համարներ, առեց ու սկսեց իբր թէ հետաքրքրութեամբ կարդալ, պատահելով Սովուչքուլաղից մի լուրի, հարցնում է. „Այդ Հայրիկն է գրել“։ Ահա այդպիսիներն են այժմ պատրաստ լրացնելու Դավրէժի պակաս քահանաների տեղը, որոնց ձեռնադրելով խեղճ, թշուառ դասակարգը կարծում է թէ ազատ պէտք է լինի մեծ-մեծ հարկեր վճարելուց, բայց չը գիտէ որ այնքան է տալիս անգիտակցաբար, որ երէկուայ տրրեխներով տգէտ տիրացուն մի քանի ժամանակից յետոյ դառնում է հարուստ վաճառական, իսկ խաւարամիտ հարուստներն էլ մտածում են թէ իրանց ընտրուկ, հլու հնազանդ կը լինի հօ, միւս բաները չ՞հանամ։

Իսկ գալով գաւառներում, այդ թըշ-

պարտաւոր է կատարելու։ Կան քահանաներ էլ, որոնք ձեռագիր կարդալու եւ գրելու սովորութիւնը չունին։

Այստեղ տեսայ մի դավրիժաբնակ հայ, պ. Գ. Սարգսեանց որ Դավրէժից ամառանոց էր եկել իւր ծննդավայրն ու հայրենիքը։ Պարոն Գ. Սարգսեանցը առանց նպատակի չէր եկել ամառանոց, այլ նա ուրիշ մի նպատակ եւս ունէր. նա եկել էր իւր դէպի հայրենիք ունեցած պարտքը վճարելու եւ իւր երախտագիտութիւնը ցոյց տալու Դարդաղին։

Մի օր ՔՔենու շուաքի տակ նստած հայր տէր Յովակիմի հետ խօսում էինք. մեր խօսակցութեան գլխաւոր նիւթն ուսման վերայ էր. տէր հօրն ասում էի թէ ինչու չէք ուսումնարան շինում, ուսուցիչ բերում ձեր որդիներին կրթելու, եւ տգիտութեան խաւարից հանելու համար։

Տէր հայրը ինձ բացատրեց. ասելով թէ „գիւղացիք չափազանց աղքատ են եւ այդ պատճառաւ չեն կարող ուսման վերայ ուշ դարձնել, չը նայելով, որ իրանք էլ հասկանում են ուսման անհրաժեշտութիւնը. սակայն ուժներիցը վեր է. գիւղացիք հաղիւ կարողանում են հաց ճարել իրանց որդւոց կերակրելու համար. նոյնպէս յայտնեց թէ, այստեղ մի ուրիշ պարոն եւս կայ, որ ցանկանում է այս գիւղում ուսումնարան բանալ, ուսուցիչ բերել եւ թէ շարունակ գիւղացիների հետ խօսում է այդ մասին“։

Տէր հօրից խնդրեցի, որ ինձ այն պարոնի մօտ տանէ, խնդիրս կատարեց։

Մենք պարոնին գտանք մի փոքրիկ սենեակում երեք ձեր գիւղացու հետ նստած խօսելիս։ Ներս մտնելուս պէս՝ խօսակցութիւնները ընդհատուեցան եւ սովորական բարեւից յետոյ, մեզ եւս տեղ որոշեցին նստելու։ Մի բոպէ լռութիւն տիրելուց յետոյ, տէր հայրը սկսեց խօսել եւ ինձ ծանօթացնել, թէ պարոնի եւ թէ նոյն տեղի ծերերի հետ. յայտնեց եւ մեր այնտեղ գնալու պատճառը եւ խօսքը վերջացրեց խնդրելով պարոնին որ շարունակէ իւր խօսակցութիւնը, որը տանում էր ծերերի հետ։

Նա սկսեց խօսել, ասելով թէ իւր խօսքը դարձեալ ուսման վերայ էր եւ շարունակեց բացատրել գիւղացիներին, թէ գիւղում ուսումնարան բացուելով ինչ զեղեցիկ արդիւնք կունենայ եւ թէ ինչ ապագայ կսպասէ իրանց որդիներին։

Գիւղացիք լսելով այդ խօսքերը հասկանում էին թէ որքան լաւ բան է ուսումը, կրթութիւնը, բայց յոյս էին լինում ասելով։ „Շատ լաւ բան է, ափսոս որ չենք կարող անել, նիւթական միջոցներից զուրկ ենք“։

Շատ երկար խօսելով ուսման վերայ, ելանք տեսութիւն անելով պարոնի հետ. ցանկանալով յաջողութիւն իւր սկսած բարենպաստակ գործին եւ դուրս եկանք։

Այս պարոնը մեզ ծանօթ Գ. Սարգսեանցն էր, մի Դավրիժցի դերձակ, որ ինքը կարդալ անգամ չը գիտէր, բայց հասկանալով ուսման նգուտը, եկել էր իւր հայրենակիցներին ճշմարիտ եռանդով ուսում էր քարոզում։

Միւս օրը արեւածագին տէր հօր հետ անցանք

ւոր գաւառներում, որ տեղ մեզ մօտ քահանան կատարում է բացի հոգևոր պաշտօնից նաև քաղաքական պաշտօնեայի դեր, նա է նորանց հոգևոր ու մարմնաւոր գործերի ներկայացուցիչը, եթէ նա ոչ բոլորովին կրթուած գոնէ զարգացած, քահանայական վեհ պաշտօնը քմբռնած չը լինի, ինչպէս որչէ, երևակայեցէք ինչ մեծ չարիքների պատճառ պէտք է դառնայ։ Այդ բանը անկարելի կարձնող ըստ մեր համոզմանն երկու բան կայ. նախ՝ ժողովուրդը չէ կարողանում գտնել զարգացած քահանաներ և որ տեղից կարող է քանի որ 50—60 տան համար ձեռնադրւում են երկու քահանաներ, ասացէք խնդրեմ, ինչպէս կարող է մի քահանայ 30 աղքատ ծխով կառավարուիլ և այդպիսի մի տեղում ի հարկէ ոչ ոք չէ համարձակուել մտնելու և մուրացկանութիւն անելու բացի մի անկիւնում վոյլը լնկած հացի կարօտ ազէտ ու անտարժան տիրացուն, որը իւր քչաբաւականութեամբ սովորեցնում է և ժողովրդին վատ լինել դէպի քահանան։ Երկրորդ՝ ազէտ տիրացուն իբրև ժառանգ իւր հօրը, լոկ անուան համար ձեռնադրւում է քահանայ, թէկուզ ժողովուրդը ոչինչ էլ չը տայ, որովհետև նա ունի իբրև սեփական վարելահողը կառավարում է արդէն դորանով և հետևապէս ինչ որ էլ ստանում է ժողովրդից դա էլ մի աւելորդ թիքայ է համարում։ Արդ պարզ է որ ազէտ ժողովուրդը աւելի այդպիսի՛ն կը համակրէ քան թէ մի ուրիշին. մի բան որին պէտք է արգելք դառնայ հոգևոր իշխանութիւնը, որպէս զի գուցէ բոլորովին չը փակուի արժանաւորների երեսին։ Ինչու չատի պել անպատճառ որ արժանաւորները ձեռնադրուին և նորանց նիւթական միջոցները բարւոքուին, ցոյց տուեցէք մի ծուխ, որ բաղկացած լինի 60—70 տնից և չը կարողանայ մի քահանայի նիւթական միջոցները ապահովացնել և դեռ աւելին։ Ինչու չը բերել գաւառներից ու գիւղերից մի-մի հատ քահանայացու և թեմական դպրոցներում գոնէ տարրական ուսում սովորեցնելուց յետոյ ձեռնադրել ու յետ ուղարկել։

Մինչև երբ ասասել, եթե այսօր Պարսկաստանի հայ գիւղերում կեանքի նշոյլ անգամ չը կայ, այդ ազէտ քահանաների բազմանալուն ու արժանաւորների պակասելուն պէտք է վերագրել. որքան շարունակուի այդ դրութեամբ, որքան դռները փակ մնան արժանաւորների երեսին, ինչքան կուզէք աղաղակեցէք, բողոքեցէք կենդանութեան, ինքնաճանաչութեան նշոյլ չէք կարող մտցնել, հակառակ դիպուածում մի խօսքն անգամ բաւական է փոքրիկ կայծերը բորբոքելու։ *)

Ե.

Դավրէժ 27 յունիսի 94.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մենք պատեհութիւն ունեցանք մեր № 4-ի խմբագրականով խօսել Վանաք գիւղի դպրոցի ցաւալի և փակ դրութեան մասին, այժմ ուրախութեամբ լսում ենք որ այդ վիճակը փոխելու մեծ ջանքեր չեն խնայուել և արդէն, մի նշանաւոր գումար է կազմուել մասնաւոր բարեսէր անձանց նուէրներից որը պէտք է ծառայէ իբրև դրամագլուխ և նորա հասոյթով պէտք է կառավարուի դպրոցը։ Դպրոցը շուտով բացուելու է։ Յաջողութիւն ենք ցանկանում։

—

Ուրախութեամբ լսում ենք որ Թէհրանի ազգային Ուսումնասիրաց ընկերութեան նախաձեռնութեամբ մի երիտասարդ, դասատու է ուղարկուած Ղարաղան գաւառը։ Ընկերութիւնը նուիրել է դպրոցին դասագրքեր և դպրոցական այլ պիտոյքներ։ Յոյս ունինք որ նոր դասատուն չը նայած իւր երիտասարդութեան և իւր պաշտօնի ծանրութեան կաշխատէ մի խոհեմ դիրք բռնել և Ղարաղանի գիւղականների համակրութիւնը ձեռք բերել։

—

Քաղաքումս մեծ պատրաստութիւններ է տեսնւում, Ն. Կ. Վ եկեղեցու Նասրէտտին Շահնշահի 65-երորդ ծննդեան տարեդարձը մեծ շքով կատարելու որ լինելու է յառաջիկայ Սաֆար վեցին (յուլիսի 27-ին)։

—

Ռաշտից մեզ գրում են, որ այնտեղ մասնաւորապէս „Շաւիղի“ հրատարակած լուրերի վերաբերութեամբ, յուզումներ են տեղի ունենում և թէ անտեղի առանց գիտենալու թէ ով է ճշմարիտ լրատուն, յարձակումներ են գործում զանազան անձնաւորութեանց դէմ, իբրև դորանց հեղինակ և մասնաւոր լրատու։ Մենք այնքան էլ չենք զարմանում դորա վերայ, քանի որ ոչ թէ միայն Ռաշտում, այլ և պարսկահայ աւելի զարգացած համարուած կենդրոններում, թերթը մի պատիժ համարուելով, դորանից շատ աւելի վատ երևոյթներ են տեղի ունենում։

—

Խմբագրութեանս մէջ ստացանք մի անծանօթից, յօգուտ Գրիգոր Արծրունու մահարձանի և գրուածների հրատարակութեան, 4 ղրան, որը աւելացնելով նախկին 102 ղրանի վերայ այժմ պատրաստի կունենանք 106 ղրան։

*) „Շաւիղը“ շօշափել է այդ հարցը, նախ քան քահանայական հարցի ծագելը ռուսահայ մամուլի մէջ, (տես թիւ 9)։

Խմբ.

մօտակայ բլուրը, որ տեղից այէտք էր ինձ ճանապարհ դնէր, իսկ ինքը վերադառնար.

Մենք հասանք բլուրը։ Գիւղացիք մեզնից շուտ դնացել էին դաշտը որ սկսէին իրանց գործերը։ Այս բլուրից երևում է Աղաղանի ամբողջ քովշանը, արտերն ու անտառները. գիւղը շրջապատուած է բարձրաձիգ անտառներով, որի միջից կոր գլուխը բարձրացրած է զարաղաղցու նուիրական կաղնին, զարաղաղցիք այս կապիտ ծառին ընդունում են հայր կամ թագաւոր ծառերի, որ իւր շուրջն հաւաքել է իւր հպատակ մյուս ծառերին. որոնք են, բոխի՝ դիկի, հացի, ընկուզենի, տանձենի, խնձորենի, սալորենի, դկսի, հոնի, ջսակի ծառեր հեայլն. վերջին երկուսից պատրաստւում է. փայտակարանցու անբաժան ընկեր մհակն ու ջուբախը, կաւի գործիքը։

Տէր Յովակիմը բլրից ցոյց տուեց ինձ բոլոր տեղերը, ցոյց տուեց եւ Սրասխ գետը, ասելով՝ տես, այն է մեր սրբազան գետը եւ ամեն մի հայի պարտքն է այցելել նորան։ Բոլորից յետոյ ցոյց տուեց գիւղից դէպի արեւմուտք գտնուած մի բարձր սրածայր գագաթ, ասելով՝ այն էլ մեր ուխտատեղին է, նորան ասում են „Սիլլան սար“ որտեղ համբարձմանը մեծ բազմութիւն է հաւաքւում։

Տէր հայրը վերջացնելով ամեն ինչ, ցոյց տուեց եւ իմ ճանապարհը եւ մի քանի պատուէրներ տալուց յետոյ համբուրեցի աջը եւ առնելով իւր օրհնութիւնը բաժանուեցանք իրարից։

Արեւի ծագելուն պէս բացուել է եւ գիւղացւոց գործերը. տարուայ ոչ մի եղանակում գիւղացին այնքան գործ չի ունենում, որքան դարնանը։

Փայտակարանի աշխատասէր մշակը ցաքատը գոտկում, կացինը ուսին դրած կտրատում է անտառի ծառերը, թփերը խմատ է տալիս արտ պատրաստելու համար. մի այլ տեղ ուրիշը անագին կաղնին դետին ձգած կտրատելով կտոն է շինում, ածուխ է պատրաստում իւր հայրենակիցների համար, որոնք բնակւում են Դավրէժ 21 մղոն հեռաւորութեամբ։ Արտում երիտասարդ մշակը եզները լծած ցել է անում. փոքրիկ հոտաղը առաջի լծի վերայ նստած տո-հո է կանչում եզներին, որ լաւ բաշին ալսեր։ Միւս արտում ջահիլ հարսերն ու աղջիկները փոքրիկ երեխաների հետ քաղ են անում փուշերը եւ վնասակար բոյսերը ցորենի կանանչից ջոկելով։ Մօտակայ բլրակի վերայ հովիւը իւր սրինգն է կլկլացնում հօտը կարգի մէջ պահելու համար։ Այսպէս ամեն տեղ կեանքը եռում է, ամեն ոք գործում է, ծեր, մանուկ, այր ու կին. գարնան անկարելի է մի անգործ զարաղաղցի ճարելը։

Անտառի բազմատեսակ ծառերի ծաղիկները ըզմայլեցնելով թռչուններին, նոքա սկսում են իրանց քաղցրաձայն երգերը։

Այսպէս հովուի սրնգի ձայնը, երիտասարդների, աղջիկների, հարսերի քաղցրաձայն երգերը, հօտաղի տո-հոն, թռչունների ծլվլոցը, կացնի ընդմիջուած հարուածները, գետին ընկնող ծառերի շռինդը, տերեւների սօսափիւնը, զառիվայրերից հոսող աղբիւրակների կարկաչը, ջրվէժների շառաչիւնը, ոչխարների մայիւնը, տաւարների բառաչիւնը, միախառնուելով բնութեան նուիրական գեղեցկութեան հետ զմայլեցնում են անցուդարձ անողներին։

(կը շարունակուի)

Բ. Տ. Ս.

ԱՐՏԱՔԻՆՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Նիւ-Եօրկից յուլիսի 11-ին հեռագրում են. մի խումբ խռովարարներ, Սան-Ֆրանչիսկո գնացող երկաթուղին քանդած և գնացքի առաջը կտրած լինելով, ամբողջ շոգեկառքը երկաթուղուց դուրս է ընկել և վագոնները թափուել են գետը, ի միջի այլոց շոգեկառքի կաթսան իսկոյն ջախջախուել է, սակայն այդ փորձանքից ուրիշ մի վնաս չէ պատահել։ Պօլսում յուլիս 10-ին մի սաստիկ երկրաշարժ պատահելով մինչև այժմ (յուլիս 11) 150 հոգի ոչնչացել են. սակայն հասարակութեան այնքան վնաս չէ հասել։

—Նոյն տեղից, յուլիսի 12-ին. հաղորդում են որ Զիկակօից մի հեռագիր յայտնում է թէ անկարգութիւնները վերջացել են և թէ առուտուրը և երթեւեկութիւնը երկաթուղու միջոցով վերսկսուել են, բայց Սան-Ֆրանչիսկօից հաղորդում են որ դեռ անկարգութիւնները այնտեղ շարունակւում են։

—Լոնդոնից հեռագրում են (յուլիս 12) որ Վիկտորիա թագուհին Ալդերշոթ է գնացել և այնտեղ գիշերելով, միւս օրը այնտեղի պահապան զօրքերի մի մեծաշուք զօրահանդէս է տեղի ունեցել։

—Կ. Պոլսից յուլիս 13-ին հաղորդում են որ երեկ գիշեր կրկին երկրաշարժը տեղի է ունեցել, կայքի և կալուածների մեծ վնասներ է եղել, բնակիչները ահ ու դողի մէջ են ընկել։ Պետերբուրգում խոլերան տարածուելու վերայ է։

—Ֆիլադելֆիայից յուլիսի 13-ին հեռագրում են որ միացեալ նահանգների նախագահ Կլիվլէնդը, խռովարարների պարագլուխների հետ խօսակցելուց յետոյ մի ժողով է գումարել որը պէտք է քննէ Զիկակօի խռովութիւնը։ Թինկ-Ցինից հաղորդում են որ չինաց և ժափոնացւոց պետութիւնները ընդունել են անգլիոյ միջամտութիւնը իրանց միջի հակառակութիւնը բառնալու համար։

—Կ. Պոլիս յուլիս 13, գիշերը կրկին երկրաշարժներ են տեղի ունեցել վնասները անչափ են։

—Փարիզից յուլիս 14-ին հեռագրում են որ Կարնօի մահուան առթիւ, ազգային մեծաշուք ւգահանդէսներ կատարելու ընդհանուր պատրաստութիւններ են տեսնւում. մտքերը խաղաղ են։ Թուլօնում խռովարարների մի դաւադրութիւն է երևան եկել, նորանք մտադիր են եղել ռազմամթերանոցը կործանել և նոր „Կարնօ“ զրահաւոր շոգենաւը այրե։

—Յուլիսի 16-ին Լոնդոնից հաղորդում են որ „Տայմզի“ Զամուլփուի թղթակիցը հեռագրում է որ նոր խռովութիւններ են ծագել ճիշդ այնտեղ ուր առաջ էլ տեղի էր ունեցել. շատ քրիստոնեաներ սպանուել են և խռովարարները Ֆրանսացի քահանաների նկատմամբ սպառնական միջոցներ են ձեռք առել, մի պատերազմական նաւ ուղարկուել է եկեղեցական պաշտօնեաների և քրիստոնեաների պաշտպանութեան համար։

—Պետերբուրգից յուլիս 15-ին հեռագրում են որ Ռուսաստանում խոլերան տարածւում է և անցեալ շաբաթում Պետերբուրգում 300 հոգի զոհ են գնացել այդ սխտին և ամբողջ քաղաքը վախի մէջ է։

—Յուլիս 16-ին Պետերբուրգից հեռագրում են, որ ռուսաց լրագիրները, Կօրէայի խնդրոյ վերաբերութեամբ, գրում են որ ռուսիոյ և անգլիոյ շահերը պահանջում են որ Ժապոնի և Չինու մէջ ծագելիք պատերազմը արգիլեն։

—Յուլիսի 18-ին Լոնդոնից հեռագրում են, որ Կ. Պոլսում երկրաշարժի պատճառած վնասները մօտաւորապէս վեց միլիոն անգլիական լիրայի են հաշւում, միայն Պօլսում 200 հոգի են ոչնչացել։ Եգիպտոսի Խէդիվը որ այժմ Պօլիս է գտնուում, նաւի մէջ է ապաստանել։

—Պետերբուրգ յուլիս 17. ռուսաց տէրութիւնը մտադիր է Սմրղանդից Մարջիլան որ Խօքանդի Ֆարղանէ գաւառումն է երկաթուղի քաշել և այն տեղից Դաշքէնդ։

—Եօքահամայից յուլիս 19-ին հեռագրում են որ պաշտօնապէս ծանուցուել է որ ժողովրդի յարձակումները անգղիացւոց զօրքի վերայ բոլորովին սուտ է և թէ բացարձակապէս յայտարարուել է, որ Անգլիոյ հիւպատոսը որովհետև աշխատել է սահմանը անցնել, Սբուլի մօտ բռնուել է։

—Հռոմից յուլիսի 20-ին հաղորդում են որ ստացուած տեղեկութիւններին նայելով, իտալական զօրքերը մի արիւնահեղ պատերազմից յետոյ, յարձակումով Քէոսլան տիրել են։ Քաուլաքիքա որ խռովասէրներից մէկն է և անցեալ ամիս ռէվոլվերի հարուածով փորձել էր Քրիսպիին սպանելու. ձերբակալուել է, և դատապարտուել է 12 տարուայ բանտարկութեան։

—Յուլիս 23-ին Շանխայից հեռագրում են որ Ֆաուլթալ, քաղաքում յայտարարել է որ չինացիք ուզած ժամանակին կարող են Վուսունգ գետի ընթացքը կապել։ Չինական զօրքը և ուրիշ պատերազմական նաւատորմ ուղարկուել են Կորէա, որ Ժապոնի և Չինու մէջ տեղի ունենալիք պատերազմի դէպքում պատրաստ գտնուին։ Չինական նաւատորմիղի ներկայութիւնը Նանկին գաւառում, վտանգ է սպառնում Ժապոնի ծովեզերքին։ Չինական ամեն մի գաւառ, եթէ Ժապոնի հետ կռուի մտնեն, 20000 կազմ և պատրաստի զօրք պէտք է տայ։

„ՇԱՒԻՂԻ“ ՊԱՏԱՍԽԱՆ

*** Մ-ին.—„Ղարիբ Մշեցի“ վերնագրով վէպիկը չէ կարող տպուիլ մինչև որ ամբողջ շարունակութիւնը չուղարկէք և վերջումը չը լինի ստորագրուած ձեր իսկական անունն և ազգանունը։

Արտօնատէր—Հրատարակիչ՝
ԱՆԴՐԷԱՍ ԲԷԿՆԱԶԱՐԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱՑՈՒԱԾ Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԶՐՈՅՑՆԵՐԻ

Առաջին հատորի
թարգմանութիւն պարսկերէնից
Միքայել Ա. Մարգարեանի

Գիրքը բաղկացած է հինգ հատորից. Ա. հատորի գինն է 30 շահի կամ 40 կոպէկ Դիմել՝ թէհրան Աբսէն Մ. Մարգարեանին։

„ՄՈՒՐՃ“

ԳԱՂԱՓԱԿԱՆ—ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ—ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԳՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ 1894 ԹՎԻՆ ԱՆԴԱՌԱՌԱՄԱՐ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է

Տարեկան գինն է 10 բուբլի
Բաժանորդագրութեան համար դիմել՝ խմբագրութեանը Tiflis. Rédaction de la Revue „MOURTCH“.

„Սէր“ ընկերութիւնը բաց է անում գրավաճառանոց Դաւրէժում եւ կոմիսիոնով ընդունում է ուսումնարանական ամեն տեսակ դասագրքեր, գրքեր եւ առարկաներ: Պայմանների մասին դիմել,
Tauris (Perse) Comité d'Instruction arménienne „SER“